

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ  
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/2-3**

ք. Երևան

« 13 » 03 2020թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կարիագամ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Համլետ Կարապետյանի, որը գործում է «Կարիագամ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոտրանսպորտային միջոցների պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն Էակնորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն Էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **1900000 ( մեկ միլիոն ինը հարյուր հազար )** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝  $VQ = UQ / LQ \times D \times P$ , որտեղ՝

VQ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

UQ-ն ընտրված մասնակցի առաջարկված հանրագումարային գինն է:

LQ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է:

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.  
Ը-ն մատուցված ծառայության քանակն է:<sup>21</sup>

## **5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (գրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **6. ԱՆՅԱՂԹԱՅՎՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի

լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 38 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՀՀ պետական եկամուտների կոմիտե  
ք. Երևան, Մովսես Խորենացու 3,7  
ՖՆ աշխատակազմի գործառնական  
վարչություն  
900011054013  
02647057  
Էդգար Գեվորգյան



«Կարիագար» ՍՊԸ  
ք. Երևան, Թբիլիսյան խճ. 29/25  
Արդշինբանկ ՓԲԸ  
h/h` 2480100076100000  
ՀՎՀՀ` 01001431

Համլետ Կարապետյան



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման հասցեն և ժամկետը
5	50111170/6	Ներկայացված են ստորև	դրամ	1300000	1	Ներկայացված են ստորև
8	50111170/9			600000		

\* Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ՀՀ դրամ

Ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գներ և հանրագումարային գին		8-րդ չափ.
h/h	5-րդ չափ.	Ֆոտո Կոնեկտ 1.8 /2010թ/, Ֆոտո-տրանսպիտ /2017թ/
	5-րդ չափ.	8-րդ չափ.
	Միջուկի L-200 2.5TD, /2011, 2013, 2015թ/	10
1	2	7
<p><b>SU-1 ներառվող ծառայությունների անվանումները</b></p> <p>SU-1 (տեխնիկական գնման/դիագնատիվա ) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացում օգտագործվող պահեստամասերի, քայլուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները</p>		
1	Բռնկման համակարգի ստուգում	5,000
2	Ստրեքման համակարգի ստուգում	5,000
3	Ցուղման համակարգի ստուգում	5,000
4	Կրտածման համակարգի ստուգում	5,000
5	Կցորդման համակարգի ստուգում	5,000
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	5,000
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	5,000
8	Կրտածման տուրի ստուգում	5,000
9	Բաշխիչ տուրի աշխատանքի ստուգում	5,000
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	5,000
11	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	5,000
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	5,000
13	ABS համակարգի ստուգում	5,000
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	5,000
15	Դեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	5,000

16	Թափքի վիճակի ստուգում	5,000	5,000
17	Տարբեր ազդեցատների յուրերի որակի և մակարդակների ստուգում	5,000	5,000
	<b>SU-2 Ներառվող ծառայությունների անվանումները</b>		
	<b>1. Շարժիչ</b>		
1	Շարժիչի հանում և տեղադրում	70,000	70,000
2	Շարժիչի հիմնական տրոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	300,000	220,000
3	Շարժիչի բարձրիկի հանում և տեղադրում	12,000	12,000
4	Բ/խտեռի կախարիչի հանում և տեղադրում	20,000	20,000
5	Շարժիչի բլրի գլխիկի հանում և տեղադրում	65,000	60,000
6	Շարժիչի գլխիկի տրոգում, եռակցում հոլկումով	200,000	18,000
7	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հոլկումով և խտաբուկերով 1 կ-տ	5,000	5,000
8	Վառոցքի մոմի բլիկի տրոգում	5,000	5,000
9	Շարժիչի փականների գապանակների փոխարինում	2,500	2,000
10	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	2,000	1,500
11	Հիդլների կամ հիդրոհիդլների փոխարինում 1 կ-տ	5,000	5,000
12	Շարժիչի միացադերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	50,000	40,000
13	Ծնկան և լիսեռի հոլկում	45,000	45,000
14	Ծնկան և լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	30,000	30,000
15	Ծնկան և լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	30,000	30,000
16	Ծնկան և լիսեռի ատամնակի փոխարինում	10,000	10,000

17	Ծնվածն լիսեռի ուղղում	25,000	25,000
18	Ծնվածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում	15,000	15,000
19	Ծնվածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	60,000	50,000
20	Շարժիչ բլրի փոխարինում	140,000	120,000
21	Շարժիչ գլանի փոխարինում (гидробака)	20,000	20,000
22	Մխոցի փոխարինում 1 հատ	30,000	30,000
23	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	40,000	40,000
24	Բաշխիչ լիսեռի ակակոնցների հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000	10,000
25	Բաշխիչ լիսեռի խտանակի փոխարինում	5,000	5,000
26	Փոկանիսի փոխարինում	5,000	5,000
27	Շարժիչ ատամնավոր փոկի փոխարինում	50,000	40,000
28	Շարժիչ շղթայի փոխարինում	80,000	80,000
29	Շարժիչ քարտերի նորոգում (ռեակցում)	5,000	5,000
30	Շարժիչ քարտերի միջադիր փոխարինում	5,000	5,000
31	Շարժիչ քարտերի հանում, տեղադրում և մաքրումով	15,000	15,000
32	Շարժիչ յուղի սղիչի փոխանակում	25,000	20,000
33	Շարժիչ յուղի սղիչի նորոգում, մաքրում	15,000	15,000
34	Շարժիչ յուղի սղիչի մաքրում	5,000	5,000
35	Ցուղի ծորակի փոխարինում	5,000	5,000
36	Օդաքաշակ փողոկի փոխարինում	5,000	5,000
37	Բ/լիսեռի կապարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	30,000	30,000
38	Շարժիչ կապարիչի միջադիր փոխարինում	30,000	30,000
39	Թափանիսի հանում և տեղադրում կամ փոխարինում	50,000	50,000
40	Շարժիչ կապույտի փոխարինում	25,000	25,000

41	Շարժիչ կափույթի միջադիր փոխարինում	25,000	25,000
42	Շարժիչ շարժաթևի փոխարինում 1 ուստ	25,000	25,000
43	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	20,000	25,000
44	Շարժիչ բաշխիչ լիսեռի երիթանի փոխարինում	15,000	15,000
45	Ատամանիկի փոխարինում	8,000	8,000
46	Ատամանավոր փոկի պատյանի փոխարինում	15,000	15,000
47	Սուխարիկի փոխարինում 1 կ-տ	15,000	15,000
48	Շարժիչ հանրատուիչի փոխարինում	25,000	25,000
49	Շարժիչ փոկի հողվակի փոխարինում	10,000	10,000
50	Շարժիչ հողվակի առանցքակալի փոխարինում	5,000	5,000
51	Շարժիչ առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիր փոխարինումով	15,000	15,000
52	Շարժիչ յուղի արանցաչափի (PSS) իրանի փոխարինում	5,000	5,000
53	Շարժիչ փոկի ձգիչի փոխարինում	15,000	15,000
54	Շարժիչ գամանեղի փոխարինում	3,000	3,000
55	Գլխիկի իերոյսի փոխարինում	3,000	3,000
56	Ծնկան, լիսեռի իերոյսի փոխարինում	3,000	3,000
57	Շարժիչ էլեկտրական համակարգի հանում և տեղադրում	50,000	50,000
58	Շարժիչ վառելիքի սնման համակարգի հանում և տեղադրում	35,000	30,000
	<b>2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>		
59	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	2,000	2,000
60	Ավտոմեքենայի յուղում	2,000	2,000
61	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ	8,000	8,000

62	Յուրի պոմսի փոխարինում	35,000	45,000
63	Յուրի ռադիատորի փոխարինում	35,000	35,000
64	Յուրի ռադիատորի տրոգում	10,000	10,000
65	Շարժիչի կոնկետորի փոխարինում	30,000	30,000
66	Շարժիչի կոնկետորի միջադիրի փոխարինում	20,000	20,000
67	Վառուցքի մոսի փոխարինում 1 կ-տ	5,000	4,000
68	Վառելիքի տուրք մաքրման գտիչի փոխարինում	15,000	12,000
69	Օդի գտիչի փոխարինում	6,000	6,000
70	Սրահի օդի գտիչի փոխարինում	6,000	6,000
71	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	17,000
72	Օդի գտիչի փողոսվի հանում և տեղադրում	5,000	5,000
73	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	8,000	8,000
74	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	8,000	8,000
75	Բոցանուղի կտրավորում	15,000	15,000
76	Ինժեկտորի բոցամուղի հատաբուկերի փոխարինում	5,000	5,000
77	Բենզամոնիչի փոխարինում	15,000	13,000
78	Վառելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում	15,000	12,000
79	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000	10,000
80	Բռնկման կարգավորում	5,000	5,000
81	CO կարգավորում	5,000	5,000
82	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	20,000
83	Ղեկավարման բլոկի վերանորոգում	25,000	25,000
84	Վառելիքի բացի հանում և տեղադրում կամ փոխարինում	25,000	20,000
85	Վառելիքի բացի մաքրում	15,000	15,000

86	Օրի ծախսի տվյալի փոխարինում	15,000	15,000
87	Զրի ջերմաստիճանի տվյալի փոխարինում	15,000	15,000
88	Զրի խողովակի, փողոսի փոխարինում	15,000	15,000
89	Բենզոլաքի բենզամոլիի ցանցի փոխարինում	5,000	5,000
90	Բենզոլաքի բենզամոլիի ցանցի մաքրում	2,000	2,000
91	Ցուրի ճշման տվյալի փոխարինում	10,000	10,000
92	Տվյալի փոխարինում	10,000	10,000
	<b>3. Սառեցման և արտաձման համակարգ</b>		
93	Հովաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	17,000
94	Հովաքի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	12,000	11,000
95	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	40,000	35,000
96	Ռադիատորի նորոգում	45,000	45,000
97	Շերտափերկի փոխարինում	18,000	18,000
98	Շերտափերկի կառավարման ճգաճողի փոխարինում	5,000	5,000
99	Ընդարձակող բացի փոխարինում	8,000	8,000
100	Ընդարձակող բացի փողոսի փոխարինում	2,000	2,000
101	Զրի ծղակի փոխարինում	5,000	5,000
102	Հովացման համակարգի ռետինե փողոսի փոխարինում	5,000	5,000
103	Հովաքի 2արժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000
104	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ներառյալ	60,000	50,000
105	Վառարանի ռադիատորի նորոգում	20,000	20,000
106	Վառարանի 2արժիչի փոխարինում	20,000	20,000
107	Թերմոստատի փոխարինում	13,000	13,000

108	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	25,000	25,000	25,000
109	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	5,000	5,000	5,000
110	Գեներատորի փոկի փոխարինում	10,000	10,000	8,000
111	Գեներատորի փոկի ձգող հորովակի փոխարինում	8,000	8,000	8,000
112	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	8,000	8,000	8,000
113	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	10,000	10,000	10,000
114	Խլարարի անուղի (xamyr) փոխարինում	1,000	1,000	1,000
115	Խլարարի Սերդիդի փոխարինում	5,000	5,000	5,000
116	Խլարարի կախոցի փոխարինում	2,000	2,000	2,000
117	Դրվացման հերուկի փոխարինում	3,000	3,000	3,000
	<b>4. Կցորդում և ՓՏ</b>			
118	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	25,000	25,000	25,000
119	Աշխատանքային կամ գլխ. գլանի Նորոգում	25,000	25,000	25,000
120	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	35,000	35,000	35,000
121	Կցորդման ռոտանի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000	15,000
122	Կցորդման ճղակի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000	15,000
123	Կցորդման փողոակի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000	15,000
124	Կցորդման երկժանի փոխարինում	15,000	15,000	15,000
125	ՓՏ-ի հիմնական Նորոգում	140,000	140,000	135,000
126	ԱՓՏ-ի հիմնական Նորոգում			
127	ՓՏ-ի հավաքածուի փոխարինում	35,000	35,000	35,000
128	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	15,000	15,000	15,000

129	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	15,000	15,000
130	ՓՏ-ի հանում և տեղադրում	40,000	40,000
131	ԱՓՏ-ի հանում և տեղադրում		
132	ՓՏ-ի արանցքակալի փոխարինում	15,000	15,000
133	ՓՏ-ի միջանկյալ լիստեղի փոխարինում	25,000	25,000
134	ՓՏ-ի ատամնասկի փոխարինում	25,000	25,000
135	ՓՏ-ի արաջնային լիստեղի փոխարինում	25,000	25,000
136	ՓՏ-ի երկրորդային լիստեղի փոխարինում	25,000	25,000
137	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	35,000	35,000
138	ՓՏ-ի բարձրիկի փոխարինում	15,000	15,000
139	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	13,500	13,500
140	ՓՏ-ի յուղի փոխարինում	5,000	5,000
141	ԱՓՏ-ի յուղի և գոլջի փոխարինում		
142	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում		
143	ԱՓՏ-ի տանող սկավարակի փոխարինում		
144	Վազքաչափի շարժաբեղի փոխարինում	5,000	5,000
145	<b>5. Բաշխիչ տուփի, կարդանային լիստեղի</b>		
145	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում	100,000	
146	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	50,000	
147	Բաշխիչ տուփի քանրում և արտատափոլում, հավաքում	50,000	
148	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	25,000	
149	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	20,000	
150	Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում	20,000	

151	Բաշխիչ տուրկի դիֆերենցիայի փոխարկում	20,000	
152	Բաշխիչ տուրկի միջակա լիսեռի փոխարկում	25,000	
153	Բաշխիչ տուրկի առանցսային լիսեռի փոխարկում	25,000	
154	Բաշխիչ տուրկի երկտնային փոխարկում	25,000	
155	Բաշխիչ տուրկի բարձրիկի փոխարկում	25,000	
156	Բաշխիչ տուրկի խտաբուսիկի փոխարկում	25,000	
157	Բաշխիչ տուրկի առանցսային փոխարկում	5,000	
158	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարկում	15,000	15,000
159	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարկում	25,000	20,000
160	Բաշխիչ տուրկի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարկում	20,000	
161	Տվիչի փոխարկում	15,000	10,000
162	Բաշխիչ լիսեռի ատանակի փոխարկում	5,000	
163	Կարդանային լիսեռի միջին կարտոցի հանում և տեղադրում կամ փոխարկում	15,000	10,000
	<b>6. Առջևի և հետևի կամրջակներ</b>		
164	Առջևի կամրջակի կիսասնում հանում և տեղադրում կամ փոխարկում	18,000	15,000
165	Առջևի կամրջակի կիսասնում առանցսային փոխարկում	13,000	13,000
166	Առջևի կամրջակի կիսասնում առանցսային խտաբուսիկի փոխարկում	5,000	5,000
167	Կամրջակի յուրի փոխարկում	5,000	5,000
168	Առջևի կամրջակի դիֆերենցիայի փոխարկում	35,000	35,000

169	Հետևի կամրջակի կիսառնում հանում և տեղադրում կամ փոխարինում	18,000	
170	Հետևի կամրջակի կիսառնում արանցքակալի փոխարինում	13,000	
171	Հետևի կամրջակի կիսառնում արանցքակալի հստաբուկերի փոխարինում	5,000	
172	Հետևի կամրջակի բռունցքի գնդան և հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	
173	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	25,000	
174	Հետևի կամրջակի բլուկավորման համակարգի նորոգում	50,000	
175	Կամրջակի տվիչի փոխարինում	5,000	5,000
	<b>7. Կախոց</b>		
176	Տրավերտի հանում և տեղադրում կամ փոխարինում	45,000	40,000
177	Ձախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում կամ փոխարինում	12,000	12,000
178	Առջևի անվակունդի արանցքակալների փոխարինում	15,000	12,000
179	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	12,000
180	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	12,000
181	Հետևի անվակունդի արանցքակալների փոխարինում	15,000	12,000
182	Անվակունդի համաձեռի և հերոլսի փոխարինում (մեկ անիվի համար)	4,000	4,000
183	Ձախ կամ աջ հողակալի հստաբուկերի փոխարինում	8,000	8,000
184	Ձախ կամ աջ հողակալի արանցքակալների փոխարինում	15,000	13,000

185	Ցնցամերմիչի թասակի փոխարինում	5,000	6,000
186	Առջևի գապանակի փոխարինում	6,000	6,000
187	Առջևի ցնցամերմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	8,000	8,000
188	Հարվածամերմիչի վառների փոխարինում	4,000	4,000
189	Ներքին թանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000	9,000
190	Ներքևի լիսակի վառների փոխարինում 1 հատ	6,000	6,000
191	Ներքևի թանի հերոյսի փոխարինում	2,000	2,000
192	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	8,000	8,000
193	Միջին ձգանի հանում և տեղադրում	8,000	8,000
194	Հարվածիչի (բարձրիկի փոխարինում)	4,000	2,000
